4346

Կանոնադրություն

Համամիութենական

Կոմունիստական (բ)

Կուսակցության

1933

ЗКП
2 99

# Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

## ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ

## (բ) ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ

3 Кп
2-22

933 ԵՐԵՎԱՆ

2-22
11 JUL 2005

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ (բ) ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ

42845

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀՍԽՀ — ССРА

ԿՈՒՍՀՐԱՏ 1933 ՅԵՐԵՎԱՆ

17.09.2013

4346

Սրբագրեց՝ Լ. Աբովյան

Գլավլիտ № 7744 (բ). Հրատ. № 111.
Պատվեր № 1274. Տիրաժ 15.000.
Հանձնված է արտադրության 7 մայիսի 1933 թ.
Ստորագրված է տպագրելու 26 հունիսի 1933 թ.

Պետհրատի Տպարան, Յերեվան

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ (բոլշևիկների) ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ

## ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԻ ՍԵԿՑԻԱ

Ընդունված ՀամԿ(բ)Կ XIV համագումարում

## I. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. *Կուսակցության անդամ է համարվում ամեն վոք, ով ընդունում է կուսակցության ծրագիրը, աշխատում է նրա կազմակերպություններից վորևե մեկում, յենթարկվում է կուսակցության վորոշումներին և տալիս է անդամավճար։*

2. *Նոր անդամներն ընդունվում են այն թեկնածուներից, վորոնք անցել են քաղաքա-*

կան գրագիտության դպրոցը և սահմանված թեկնածուական ստաժը:

Թեկնածությունից կուսակցության անդամ ընդունելու կարգը հետևյալն է.

ա) Սահմանվում է յերեք կատեգորիա՝ 1) բանվորներ և բանվորների ու գյուղացիների շարքերից դուրս յեկած կարմիր բանակայիններ. 2) գյուղացիներ (բացի կարմիր բանակայիններից), տնայնագործներ, վորոնք ուրիշի աշխատանքը չեն շահագործում, և 3) այլք (ծառայողներ և այլն):

Առաջին կատեգորիան բաժանվում է յերկու խմբի:

Առաջին կատեգորիայի առաջին խմբի մեջ են մտնում այն արդյունաբերական բանվորները, վորոնք անընդհատ զբաղված են վարձու ֆիզիկական աշխատանքով:

Առաջին կատեգորիայի յերկրորդ խմբի մեջ են մտնում վոչ-արդյունաբերական բանվորները, բանվորների և գյուղացիների շարքերից դուրս յեկած կարմիր բանակայինները և բատրակները:

բ) Կուսակցության մեջ ընդունվելու համար առաջին կատեգորիայի առաջին խմբին



պատկանողները ներկայացնում են մեկ տարվա կուսստաժ ունեցող յերկու կուսանդամի յերաշխավորություն. առաջին կատեգորիայի յերկրորդ խմբին պատկանողները՝ յերկու տարվա կուսստաժ ունեցող յերկու կուսանդամի յերաշխավորություն. յերկրորդ կատեգորիային պատկանողները՝ յերկու տարվա կուսստաժ ունեցող յերեք կուսանդամի յերաշխավորություն.. յերրորդ կատեգորիային պատկանողները՝ հինգ տարվա կուսստաժ ունեցող հինգ կուսանդամի յերաշխավորություն:

Ծանոթություն. Կոմյերիտմիությունից առաջին և յերկրորդ կատեգորիայով կուսակցության անդամ ընդունելիս՝ Համ. ԼԿՅԵՄ կենտկոմի յերաշխավորությունը հավասարվում է կուսակցության մեկ անդամի յերաշխավորությանը:

գ) Այլ կուսակցություններից յեկածներն ընդունվում են բացառիկ դեպքերում հինգ տարվա կուսստաժ ունեցող հինգ կուսանդամի յերաշխավորությամբ, վոչ այլ կերպ, քան արտադրական բջջի միջոցով և անպայման

կենտկոմի հաստատությամբ, անկախ ընդուն-
վողի սոցիալական դրությունից:

Ծանոթություն. Այլ կուսակցություն-
ներից յեկածների վերջնական հաստատ-
ման իրավունքը Կենտկոմը կարող է վե-
րապահել առանձին յերկրային կուսակ-
ցական կոմիտեների և ազգային Կոմկուս-
ների Կենտկոմներին:

դ) Յերաշխավորությունների ստուգումը նախորդում է ընդունելուն և կատարվում է տեղական կուսակցական կոմիտեյի միջոցով:

ե) Կուսակցության մեջ ընդունվելու հարցը նախորոք քննում է բջիջը, վճռում է կազմակերպության ընդհանուր ժողովը և ուժի մեջ է մտնում՝ առաջին կատեգորիայի համար գավկոմի կամ ռայկոմի (քաղաքներում և արդյունաբերական կենտրոններում) հաստատումով, յերկրորդի և յերրորդի համար՝ շրջանային (окружной) կամ նահանգական կոմիտեյի հաստատումով: Քաղաքների ռայոնական կազմակերպություններում կուսակցության մեջ ընդունելու հարցը վճռվում է կուսակցության անդամների ընդհանուր ժողովում: Քաղաքային ռայոններում հազարից ա-



վելի անդամ և թեկնածու լինելու դեպքում ընդունելությունը կատարվում է ռայկոմի պլենումում առանց ընդհանուր ժողովի սանկցիայի:

գ) Յերիտասարդությունը մինչև 20 տարեկան հասակը ներառյալ (բացառությամբ կարմիր բանակայինների) կուսակցության մեջ է մտնում միմիայն ՀաԼԿՅԵՄ միջոցով:

3. Յերաշխավորողները պատասխանատու յեն յերաշխավորածների համար, անհիմն յերաշխավորություններ տալու դեպքում յենթարկվում են կուսակցական տույժի, մինչև կուսակցությունից վտարվելը:

4. Թեկնածությունից կուսակցության անդամ ընդունվողի կուսստաժը հաշվվում է այն օրից, յերբ համապատասխան բջջի ընդհանուր ժողովը տվյալ ընկերոջ կուսակցության անդամ հաստատելու մասին վորոշում է ընդունում:

5. Մի կազմակերպության ամեն մի անդամ այլ կազմակերպության աշխատանքի վայրը փոխադրվելու դեպքում գրանցվում է այդ կազմակերպության անդամների թվում:

Ծանոթություն. Կուսակցության ան-

դամների մի կազմակերպությունից մյուսը փոխադրվելը կատարվում է կուսակցության կենտկոմի սահմանած կանոնների համաձայն:

6. Որևէ մեկին կուսակցությունից վտարելու հարցը վճռում է այն կազմակերպության ընդհանուր ժողովը, որի անդամ է տվյալ անձը, և հաստատում է նահանգական (շրջանային) վերահսկիչ հանձնաժողովը, կամ լուծում է անմիջորեն նահանգական (շրջանային) վերահսկիչ հանձնաժողովը: Վտարման որոշումն ուժի մեջ է մտնում նահանգական (շրջանային) կոմիտեյի հետ որոշումը համաձայնեցնելուց հետո միայն, ընդ որում ընդհանուր ժողովի կամ նահանգական ՎՀ (շրջ. ՎՀ) կողմից վտարվելու օրվանից տվյալ անձը հեռացվում է կուսակցական աշխատանքից: Կուսակցությունից վտարված անդամների մասին հայտարարվում է կուսակցական մամուլում՝ նշելով վտարման պատճառները:



## II. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՄԱՍԻՆ

7. Բոլոր այն անձերը, որոնք ցանկանում են կուսակցությանն անդամագրվել, անցնում են թեկնածուական ստաժ, որի նպատակն է՝ նրանց հիմնավորապես ծանոթացնել կուսակցության ծրագրի և տակտիկայի հետ և ստուգել թեկնածուի անձնական հատկությունները:

8. Թեկնածուներ ընդունելու կարգը (կատեգորիաների բաժանելը, երաշխավորությունների բնույթն ու ստուգումը, կազմակերպության վճիռն՝ ընդունելու և կուսկոմից հաստատվելու մասին) բոլորովին նույնն է, ինչ որ կուսակցության անդամ ընդունելիս:

9. Թեկնածուական ստաժը սահմանվում է.—առաջին կատեգորիայի համար 6 ամսից ոչ պակաս, երկրորդ կատեգորիայի համար՝ 1 տարուց ոչ պակաս և երրորդ կատեգորիայի համար՝ 2 տարուց ոչ պակաս:

Ծանոթություն. Ուրիշ կուսակցություններից եկածները, անկախ իրենց

սոցիալական դրությունից՝ անցնում են յերկու տարվա թեկնածուական ստաժ:

10· Կուսանդամության թեկնածուները մասնակցում են ա՛յն կազմակերպության դռնբաց ժողովներին, վորի կազմում են: Կուսակցության անդամության թեկնածուները, մասնակցելով կուժողովներում, վճռողական ձայնի իրավունք չունեն, այլ մասնակցում են միայն խորհրդակցական ձայնի իրավունքով:

11· Թեկնածուները սովորական անդամավճար են մուծում տեղական կուսակցական կոմիտեյի գանձարկղը:

## III. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՄԱՍԻՆ

12· Կուսակցության կազմակերպական կառուցվածքի ղեկավար սկզբունքը դեմոկրատական կենտրոնացումն է (централизм):

13· Կուսակցությունը կառուցվում է դեմոկրատական կենտրոնացման հիմունքներով, ըստ տերրիտորիալ հատկանշի· վորևէ վայր սպասարկող կազմակերպությունը բարձրագույն է համարվում բոլոր այն կազմակեր-



պությունների նկատմամբ, վորոնք սպասարկում են տվյալ շրջանի մասերը:

14· Կուսակցական բոլոր կազմակերպությունները տեղական հարցերը վճռելու մեջ ինքնավար են (автономны):

15· Յուրաքանչյուր կազմակերպության բարձրագույն ղեկավար մարմինը հանդիսանում է ընդհանուր ժողովը, կոնֆերանսը կամ համագումարը:

16· Ընդհանուր ժողովը, կոնֆերանսը կամ համագումարն ընտրում են կոմիտե, վորը հանդիսանում է նրանց գործադիր մարմինը և ղեկավարում է տեղական կազմակերպության ամբողջ ընթացիկ աշխատանքը:

17· Կուսակցության կազմակերպական սխեման հետևյալն է·

ա) ԽՍՀՄ տերրիտորիա—Համամիութենական համագումար—Կենտկոմ:

բ) Մարզեր (область), հանրապետություններ, նահանգներ—մարզային (յերկրային) կոնֆերանսներ, ազգային կոմկուսակցությունների համագումարներ, նահանգական կոնֆերանսներ—մարզային (յերկրային) կո-

միտեններ, ազգային կոմկուսակցությունների կենտկոմներ, նահկոմներ։

գ) Շրջաններ (округа), գավառներ—շրջանային, գավառային կոնֆերանսներ—շրջանային, գավառային կոմիտեներ։

դ) Գավառակներ (волости, ռայոններ)—գավառակային (ռայոնական) կոնֆերանսներ—գավառակային (ռայոնական) կոմիտեներ։

ե) Ձեռնարկություններ, գյուղեր, կարմիր-բանակային զորամասեր, հիմնարկություններ—բջիջների ընդհանուր ժողովներ—բջիջների բյուրոներ։

18. Ենթարկման, հաշվետվության, կուսակցական բոլոր վորոշումների ընթացքի և վիճարկման (оспаривание) կարգը (բարձրագույն ինստանցիայից դեպի ստորադասը) հետևյալն է. Համամիութենական համագումար, Կենտկոմ, մարզային (յերկրային) կոնֆերանս, մարզային (յերկրային) կոմիտե, ազգային կոմկուսակցությունների կոնֆերանս, ազգային կոմկուսակցությունների կենտկոմ, նահանգական կոնֆերանս և այլն։

19. Կուսակցական աշխատանքի առանձին ձևերի համար կազմվում են հատուկ բաժին-



ներ։ Բաժինները գործում են կոմիտեներին կից և անմիջորեն յենթարկվում են նրանց։ Բաժինների կազմակերպման կարգը սահմանվում է Կենտկոմի հատուկ հրահանգներով։

20. Յուրաքանչյուր կազմակերպություն վերջնականապես հաստատվելուց հետո իրավունք ունի իր կնիքն ունենալու, սակայն վոչ այլ կերպ, քան համապատասխան բարձրագույն կուսակցական մարմնի սանկցիայով։

## IV. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

21. Կուսակցության գերագույն մարմինը համագումարն է։ Հերթական համագումարները հրավիրվում են տարին մեկ անգամ*)։ Արտակարգ համագումարները հրավիրում է Կենտրոնական Կոմիտեն սեփական նախաձեռնությամբ կամ կուսակցական վերջին համագումարում ներկայացված անդամների ընդ-

---

*) Տես «ՀամԿ(բ)Կ XV համագումարի վորոշումը կազմակերպական առանձին հարցերի վերաբերմամբ», եջ 58

հանուր թվի 1/3-ից ոչ պակասի պահանջով: Կուսակցական համագումար հրավիրելու մասին և համագումարի օրակարգը հայտարարվում է ոչ ուշ, քան մինչև մեկ և կես ամիս համագումարից առաջ: Արտակարգ համագումարը հրավիրվում է յերկու ամսվա ընթացքում:

Համագումարն օրինական է համարվում, յեթե նրանում ներկայացված են կուսակցության վերջին հերթական համագումարում ներկայացված բոլոր կուսանդամների կեսից ոչ պակաս կուսանդամներ:

Կուսակցության համագումարի ներկայացուցչական նորմաները սահմանում է կենտրոնական կոմիտեն:

22· Յեթե 21-րդ կետում նշած ժամանակամիջոցում կենտրոնական կոմիտեն արտակարգ համագումար չհրավիրի, արտակարգ համագումար պահանջող կազմակերպությունները իրավունք ունեն կազմելու կազմակերպական կոմիտե, վորը համագումար հրավիրելու հարցում օգտվում է կենտրոնական կոմիտեյի իրավունքներով:

23· Համագումարը— ա) լսում և հաստա-



տում է կենտրոնական կոմիտեյի, կենտրոնական վերահսկիչ հանձնաժողովի, կենտրոնական վերստուգիչ հանձնաժողովի և այլ կենտրոնական հիմնարկությունների հաշվետվությունները· բ) վերանայում ու փոփոխում է կուսակցության ծրագիրն ու կանոնադրությունը· գ) վորոշում է կուսակցության տակտիկական գիծն ընթացիկ հարցերի վերաբերմամբ· դ) ընտրում է կենտրոնական կոմիտե, կենտրոնական վերահսկիչ հանձնաժողով և կենտրոնական վերստուգիչ հանձնաժողով և այլն:

24· Կենտրոնական կոմիտեն ընտրվում է համագումարի սահմանած կազմով: Կենտրոնական կոմիտեյի անդամների հեռանալու դեպքում նրա կազմը լրացվում է համագումարի ընտրած թեկնածուներից՝ համագումարի վորոշած կարգով:

25· Կենտրոնական կոմիտեն համագումարից-համագումար ղեկավարում է կուսակցության ամբողջ աշխատանքը, կուսակցության ներկայացուցիչն է հանդիսանում ուրիշ կուսակցությունների, կազմակերպությունների և հիմնարկությունների հետ հարաբերության

մեջ մտնելիս, կազմակերպում է կուսակցության զանազան հիմնարկություններ և ղեկավարում է նրանց գործունեությունը, նշանակում է իր վերահսկողության տակ աշխատող կենտրոնական օրգանների խմբագրությունները և հաստատում տեղական խոշոր կազմակերպությունների կուսակցական օրգանների խմբագիրներին, կազմակերպում և վարում է հասարակական նշանակություն ունեցող ձեռնարկությունները, բաշխում է կուսակցության ուժերն ու միջոցները և վարում է կենտրոնական գանձարկղը:

Կենտրոնական կոմիտեն կուսակցական Փրակցիաների միջոցով ուղղություն է տալիս կենտրոնական խորհրդային և հասարակական կազմակերպությունների աշխատանքներին:

Կենտրոնական կոմիտեն առնվազն յերկու ամիսը մեկ անգամ ունենում է մեկ պլենար նիստ: Կենտկոմի թեկնածուները Կենտկոմի պլենումի նիստերին մասնակցում են խորհըրդակցական ձայնի իրավունքով:

26. Կենտրոնական կոմիտեն կազմակերպում է. քաղաքական աշխատանքի համար—քաղաքական բյուրո, կազմակերպական աշխատան-



1010/42845

քի ընդհանուր ղեկավարության համար—կազմակերպական բյուրո և կազմակերպական ու գործադրական բնույթ կրող ընթացիկ աշխատանքների համար—քարտուղարություն:

27. Կուսակցական մեկ համագումարից մինչև մյուսը՝ Կենտրոնական կոմիտեն հրավիրում է համամիութենական կուսակցական մեկ կոնֆերանս՝ տեղական կուսակցական կազմակերպությունների ներկայացուցիչներից:

28. Կենտրոնական կոմիտեն իր աշխատանքների մասին պարբերաբար ինֆորմացիա յե տալիս կուսակցական կազմակերպություններին:

29. Կենտրոնական վերահսկիչ հանձնաժողովն ընտրվում է կուսակցության համագումարի վորոշած կազմով:

30. Կենտրոնական վերստուգիչ հանձնաժողովն ընտրվում է կուսակցության համագումարի վորոշած կազմով. ընտրվողների կուսակցական ստաժը 10 տարուց պակաս չպետք է լինի:

Կենտրոնական վերստուգիչ հանձնաժողովը վերստուգում է.—ա) գործերի ընթացքի արա-

ղությունն ու ճշտությունը կուսակցության կենտրոնական մարմիններում և ՀամԿ(բ)Կ ԿԿ քարտուղարության ապարատի կանոնավորությունը. բ) ՀամԿ(բ)Կ ԿԿ գանձարկղն ու ձեռնարկությունները:

## V. ՄԱՐԶԱՅԻՆ (ՅԵՐԿՐԱՅԻՆ) ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

31. Կուսակցության կազմակերպությունները ՀամԿ(բ)Կ ԿԿ թույլտվությամբ կարող են միանալ և կազմել մարզային (յերկրային) միավորումներ: Մարզի (յերկրի) սահմանները վորոշում է մարզային (յերկրային) կոնֆերանսը և հաստատում է Կենտկոմը:

32. ԽՍՀՄ և ՌՍՖԽՀ ազգային հանրապետությունների (և մարզերի) տերրիտորիան ընդգրկող կուսակցական կազմակերպությունները հավասարեցվում են կուսակցության մարզային (կամ նահանգական) կազմակերպություններին, այսինքն՝ ամբողջովին յենթակա յեն ՀամԿ(բ)Կ Կենտկոմին:

33. Մարզային (յերկրային) կոմիտեն (կամ ազգային կոմունիստական կուսակցության



կենտկոմն ընտրվում է մարզային (յերկրային) կոնֆերանսում (կամ ազգային կոմկուսի համագումարում):

Ծանոթություն. Յերկրային և նրանց հավասար նշանակություն ունեցող կոմիտեների նախագահություններին կամ բյուրոներին հաստատում է ՀամԿ(բ)Կ ԿԿ:

34. Այնտեղ, ուր գոյություն ունեն մարզային տնտեսական մարմիններ (տնտեսական խորհուրդներ և այլն), կամ կենտրոնից բավականաչափ հեռու շրջաններում՝ Կենտկոմի առանձին վորոշումով կազմվում են մարզային բյուրոներ, վորոնց նշանակում է ՀամԿ(բ)Կ Կենտկոմը՝ յուրաքանչյուր անգամ Կենտկոմի սահմանած կազմով: Կենտկոմի մարզային բյուրոները պատասխանատու յեն միայն ՀամԿ(բ)Կ ԿԿ առաջ:

35. Մարզային (յերկրային) հերթական կոնֆերանս (կամ ազգային կոմկուսի համագումար) հրավիրում է մարզային (յերկրային) կոմիտեն (ազգային կոմկուսի Կենտկոմը) տարին մեկ անգամ. արտակարգ կոնֆերանս հրավիրում է մարզային (յերկրային) կոմիտեյի (ազգային կոմկուսի Կենտկոմի) կամ

կենտկոմն ընտրվում է մարզային (երկրային) կոնֆերանսում (կամ ազգային կոմկուսի համագումարում)։

Ծանոթություն. Երկրային և նրանց հավասար նշանակություն ունեցող կոմիտեների նախագահություններին կամ բյուրոներին հաստատում է ՀամԿ(բ)Կ ԿԿ։

34. Այնտեղ, ուր գոյություն ունեն մարզային տնտեսական մարմիններ (տնտեսական խորհուրդներ և այլն), կամ կենտրոնից բավականաչափ հեռու շրջաններում՝ կենտկոմի առանձին որոշումով կազմվում են մարզային բյուրոներ, որոնց նշանակում է ՀամԿ(բ)Կ կենտկոմը՝ յուրաքանչյուր անգամ կենտկոմի սահմանած կազմով։ Կենտկոմի մարզային բյուրոները պատասխանատու են միայն ՀամԿ(բ)Կ ԿԿ առաջ։

35. Մարզային (երկրային) հերթական կոնֆերանս (կամ ազգային կոմկուսի համագումար) հրավիրում է մարզային (երկրային) կոմիտեն (ազգային կոմկուսի կենտկոմը) տարին մեկ անգամ. արտակարգ կոնֆերանս հրավիրում է մարզային (երկրային) կոմիտեյի (ազգային կոմկուսի կենտկոմի) կամ

մարզային (երկրային) կազմակերպությունների անդամների ընդհանուր թվի 1/3-ի վորոշումով։

Մարզային (երկրային) կոնֆերանսի (ազգ. Կոմկուսի համագումար) ներկայացուցչական նորմաները սահմանում է մարզային (երկրային) կոմիտեն (ազգային Կոմկուսի Կենտկոմը)։

Մարզային (երկրային) կոնֆերանսը (ազգային Կոմկուսի համագումարը) լսում և հաստատում է մարզային (երկրային) կոմիտեյի (ազգային Կոմկուսի Կենտկոմի, վերահսկիչ հանձնաժողովի, վերստուգիչ հանձնաժողովի և մարզային (երկրային) այլ հաստատությունների հաշվետվությունները, քննարկում է մարզի (երկրի) կամ հանրապետության կուսակցական, խորհրդային, տնտեսական և արհեստակցական աշխատանքի հարցերը և ընտրում է մարզային (երկրային) կոմիտե, մարզային (երկրային) վերահսկիչ հանձնաժողով և վերստուգիչ հանձնաժողով (ազգային Կոմկուսների Կենտկոմ, ԿՎՀ, Կ. Վերստուգիչ հանձնաժողով)։

36· Մարզային (երկրային) կոմիտեն ըն-



թացիկ աշխատանքի համար իր կազմից ընտրում է բյուրո առնվազն 5 անձից։

Մարզային (երկրային) կոմիտեն (ազգային Կոմկուսի Կենտկոմը) մարզի (երկրի) սահմաններում կազմակերպում է կուսակցության զանազան հիմնարկներ, ղեկավարում է նրանց գործունեությունը, նշանակում է մարզային (երկրային) կուսակցական օրգանի խմբագրություն, վորն աշխատում է նրա վերահսկողության տակ, կազմակերպում և վարում է իր՝ մարզի համար ընդհանուր նշանակություն ունեցող ձեռնարկությունները, մարզի (երկրի) սահմաններում բաշխում է կուսակցության ուժերն ու միջոցները և վարում է մարզային (երկրային) կուսակցական գանձարկղը։ Մարզային (երկրային) կոմիտեն (ազգային Կոմկուսի Կենտկոմը) կուսակցական ֆրակցիաների միջոցով ուղղություն է տալիս խորհուրդների, արհմիությունների, կոոպերացիայի մարմինների և այլ կազմակերպությունների գործունեությանը, այլ և անմիջորեն ուղղություն է տալիս ՀամԼԿԵՄ կազմակերպությունների աշխատանքին և մանրամասն հաշվետվություն է ներկայաց-

նում կենտկոմին այն ժամկետներին և այն ձևով, որ սահմանել է ՀամԿ(բ)Կ կենտկոմը:

Մարզային կոմիտեի (կամ ազգային կոմկուսի կենտկոմի) պլենումը գումարվում է ոչ ուշ, քան 2 ամիսը մեկ անգամ:

## VI. ՆԱՀԱՆԳԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

37. Կուսակցության հերթական նահանգական կոնֆերանսը հրավիրում է նահանգական կոմիտեն ոչ ուշ, քան տարին մեկ անգամ, իսկ արտակարգ կոնֆերանսներ հրավիրվում են նահանգական կոմիտեի կամ նահանգի սահմաններում գործող կուսկազմակերպությունների անդամների ընդհանուր թվի 1/3-ի վորոշումով:

Նահանգական կոնֆերանսը լսում և հաստատում է նահանգական կոմիտեյի, նահանգական վերահսկիչ հանձնաժողովի, վերստուգիչ հանձնաժողովի և նահանգական այլ հիմնարկությունների հաշվետվությունները, քննարկում է տվյալ նահանգի կուսակցական, խորհրդային, տնտեսական և արհեստակցական աշխատանքի հարցերը, ընտրում է նահանգական կոմիտե, նահանգական վերահսկիչ հանձնաժողով, վերստուգիչ հանձնաժողով և համամիութենական համագումարի պատգամավորներ:



38. Նահանգական կոմիտեն ընտրում է կոնֆերանսը, ըստ վորում նրա կազմի մեջ պետք մտցվեն թե՛ նահանգական և թե՛ տվյալ նահանգի այլ բանվորական խոշոր կենտրոնների աշխատողները:

Նահանգական կոմիտեն գումարվում է վոչ ուշ, քան ամիսը մեկ անգամ: Ընթացիկ աշխատանքի համար նահանգական կոմիտեն իր միջից ընտրում է բյուրո՝ կազմված առնվազն 5 մարդուց:

Բյուրոյի կազմից առնվազն 3 մարդ պետք է նշանակվեն միմիայն կուսակցական աշխատանքի համար:

Նահանգական կոմիտեյի քարտուղարի համար պարտադիր է 7 տարվա կուսակցական ստաժ և վերադաս կուսակցական ինստանցիայի հաստատումը (միմիայն այդ վերադաս մարմնի համաձայնությամբ է թույլատրվում

բացառություն անել կուսստաժի չափի նկատմամբ)։

39. Նահանգական կոմիտեն մարզային (երկրային) կոմիտեյի կամ Կենտկոմի սանկցիայով հաստատում է նահանգի գավառային և ռայոնական կազմակերպությունները, նահանգի սահմաններում կազմակերպում և կուսակցության զանազան հիմնարկություններ, ղեկավարում է նրանց գործունեությունը, նշանակում նահանգական կուսակցական օրգանի խմբագրություն, վորն աշխատում է նրա հսկողության տակ, կազմակերպում է նահանգական նշանակություն ունեցող իր բոլոր ձեռնարկությունները, նահանգի սահմաններում բաշխում է կուսակցության ուժերն ու միջոցները և վարում նահանգական գանձարկղը։

Նահանգական կոմիտեն համապատասխան ֆրակցիաների միջոցով ուղղություն է տալիս խորհուրդների, արհեստակցական միությունների, կոոպերատիվ միավորումների և այլ կազմակերպությունների գործունեությանը, այլև անմիջորեն ուղղություն է տալիս կոմյերիտմիության աշխատանքին։



Նահանգական կոմիտեն իր գործունեության մասին հաշվետվություն է ներկայացնում Կենտկոմին նրա սահմանած ժամկետներին և ձևով։ Ինքնավար հանրապետությունների և մարզերի մարզային կոմիտեները հավասարեցվում են նահանգական կոմիտեներին։

40. Նահանգական կոմիտեները կոնֆերանսից կոնֆերանս պարբերաբար ինֆորմացիոն զեկուցումներ են տալիս քաղաքային կամ գավառային (շրջանային)· կազմակերպությունների ընդհանուր ժողովին կամ կոնֆերանսին· բացի դրանից, նահանգական կոմիտեները հրավիրում են ընդլայնված պլենումներ կամ նահանգական խորհրդակցություններ գավկոմների և ռայկոմների (անմիջականորեն նահկոմին ենթակա) ներկայացուցիչներից)։

41. Նահանգական քաղաքներում ըստ կարիքի հիմնվում են ռայոնական կազմակերպություններ գավառային կազմակերպությունների իրավունքներով, վորոնք անմիջորեն ենթարկվում են նահանգական կոմիտեյին։

## VII. ՇՐՋԱՆԱՅԻՆ (ОКРУЖНЫЕ) ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

42. Կուսակցական շրջանային կոնֆերանս հրավիրում է շրջանային կոմիտեն վոչ պակաս, քան տարին մեկ անգամ, արտակարգ կոնֆերանս հրավիրվում է շրջանային կոմիտեյի կամ շրջանի մեջ մտնող կազմակերպությունների ընդհանուր թվի 1/3-ի վորոշումով:

Շրջանային կոնֆերանսը լսում և հաստատում է շրջանային կոմիտեյի, վերահսկիչ հանձնաժողովի, վերստուգիչ հանձնաժողովի և շրջանային այլ հիմնարկությունների հաշվետվությունները, ընտրում է շրջանային կոմիտե, վերահսկիչ հանձնաժողով, վերստուգիչ հանձնաժողով և կուսակցության համամիութենական համագումարի պատգամավորներ:

43. Կոնֆերանսի ընտրած շրջանային կոմիտեյի կազմի մեջ պետք է մտցվեն թե՛ շրջանային և թե՛ տվյալ շրջանի այլ բանվորական խոշոր կենտրոնների գործիչները:

44. Շրջանային կոմիտեն գումարվում է



առնվազն ամիսը մեկ անգամ: Ընթացիկ աշխատանքի համար շրջանային կոմիտեն իր կազմից ընտրում է բյուրո 5 մարդուց վոչ պակաս կազմով:

Բյուրոյի կազմից առնվազն 3 մարդ պետք է նշանակվեն միմիայն կուսակցական աշխատանքի համար:

Շրջանային կոմիտեյի քարտուղարի համար պարտադիր է 5 տարվա կուսակցական ստաժ և կուսակցական վերադաս ինստանցիայի հաստատումը (ստաժի նկատմամբ բացառություն թույլատրվում է միմիայն այդ ինստանցիայի համաձայնությամբ):

45. Շրջանային կոմիտեն հաստատում է ռայոնական կազմակերպությունները ու կուսակցական բջիջները (այդ ռայոնական կազմակերպությունները հաստատվում են մարզային (յերկրային) կոմիտեների կամ ազգ. կոմկուսների կենտկոմների կողմից), շրջանի սահմաններում կազմակերպում է կուսակցության զանազան հիմնարկություններ և ղեկավարում է նրանց գործունեյությունը, նշանակում է կուսակցական շրջանային որգանի խմբագրություն, վորն աշխատում է

նրա ղեկավարության տակ, կազմակերպում է շրջանային նշանակություն ունեցող իր բոլոր ձեռնարկությունները, շրջանի սահմաններում բաշխում է կուսակցության ուժերն ու միջոցները և վարում է շրջանային գանձարկղը: Շրջանային կոմիտեն համապատասխան ֆրակցիաների միջոցով ուղղություն է տալիս խորհուրդների, արհեստակցական միությունների, կոոպերատիվ և այլ միավորումների գործունեությանը, այլև անմիջականորեն ուղղություն է տալիս կոմյերիտմիության աշխատանքին: Շրջանային կոմիտեն կենտկոմի սահմանած ժամկետներին և ձևով իր գործունեության վերաբերմամբ հաշվետվություն է ներկայացնում մարզային (երկրային) կոմիտեին (կամ ազգ. կոմկուսի կենտկոմին):

46. Շրջանային կոմիտեները կոնֆերանսից կոնֆերանս պարբերաբար ինֆորմացիոն զեկուցումներ են տալիս քաղաքային կամ ռայոնական կազմակերպությունների ընդհանուր ժողովին կամ կոնֆերանսին. բացի դրանից շրջանային կոմիտեները հրավիրում են ընդլայնված պլենումներ կամ շրջանային խորհրդ-



դակցություններ ռայկոմների և խոշոր բջիջների (անմիջականորեն շրջկոմին ենթակա) ներկայացուցիչներից:

47. Շրջանային խոշոր քաղաքներում կուսակցական վերադաս կոմիտեի թույլտվությամբ կարող են կազմակերպվել ռայոնական կազմակերպություններ՝ նահանգական քաղաքների ռայկոմներին հավասար իրավունքներով:

## VIII. ԳԱՎԱՌԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

48. Գավառային կոնֆերանսը լսում և հաստատում է գավառային կոմիտեի, վերստուգիչ հանձնաժողովի, նահանգական վերահսկիչ հանձնաժողովի լիազորի հաշվետվությունները, քննարկում է գավառի կուսակցական, խորհրդային, տնտեսական և արհեստակցական աշխատանքի հարցերը, ընտրում է կոմիտե, վերստուգիչ հանձնաժողով և նահանգական կոնֆերանսի պատգամավորներ: Կոնֆերանսը հրավիրվում է 6 ամիսը մեկ անգամ:

49. Գավառային կոմիտեն ընտրվում է գավառային կոնֆերանսում: Գավառային

կոմիտեն իր կազմից ընտրում է 5—7 անձից բաղկացած բյուրո, վորոնցից վոչ պակաս, քան 3 ընկեր պետք է ազատված լինեն ամեն մի աշխատանքից, բացի կուսակցականից։

Գավառային կոմիտեյի քարտուղարի համար պարտադիր է 3 տարվա կուսակցական ստաժ և կուսակցական վերադաս ինստանցիայի հաստատումը (վորի սանկցիայով միայն կարելի յե բացառություն անել ստաժի չափի նկատմամբ)։

50. Գավառային կոմիտեն նահանգական կոմիտեյի թույլտվությամբ հաստատում է գավառի շրջանային և վոլոստային կազմակերպությունները ու բջիջները, գավառի սահմաններում կազմակերպում է կուսակցության զանազան հիմնարկություններ, ղեկավարում նրանց գործունեյությունը, կազմակերպում է գավառային նշանակություն ունեցող իր բոլոր ձեռնարկությունները, գավառային բջիջների ներկայացուցիչներից խորհրդակցություններ է կազմում և վարում գավառային կուսակցական գանձարկղը։

Ծանոթություն. Գավառային կուսակցական կոմիտեն կուսակցական գրա-



կանություն և կուսակցական որգան կարող է հրատարակել միմիայն նահանգական կոմիտեյի թույլտվությամբ։

51. Գավառային կոմիտեն գավառի սահմաններում կուսակցական ֆրակցիաների միջոցով ուղղություն է տալիս գավառային գործադիր կոմիտեյի, ինչպես և արհեստակցական կազմակերպությունների, կոոպերատիվ և այլ միավորումների աշխատանքներին, այլև անմիջորեն ուղղություն է տալիս կոմյերիտմիության կազմակերպությունների աշխատանքին։

## IX. ԳԱՎԱՌԱԿԱՅԻՆ (*ВОЛОСТНЫЕ*, ՌԱՅՈՆԱԿԱՆ) ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

52. Գավառակի բարձրագույն մարմինը տվյալ գավառակի կուսակցության անդամների ընդհանուր ժողովն է։

Ծանոթություն. Ընդարձակ գավառակներում (շրջաններում), վորտեղ ընդհանուր ժողով հրավիրելը դժվար է, թույլ է տրվում ընդհանուր ժողովի փոխարեն գավառակային (շրջանային) կոնֆերանս

հրավիրել: Այդպիսի կոնֆերանսները հրավիրվում են առնվազն 3 ամիսը մեկ անգամ:

53. Գավառակային (շրջանային) ընդհանուր ժողով հրավիրվում է առնվազն ամիսը մեկ անգամ, ընդհանուր ժողովը ա) վճռում է կուսակցության անդամների ընդունելության և վտարման հարցերը՝ իր վորոշումները ներկայացնելով վերադաս կուսկոմիտեներին ի հաստատություն. բ) քննարկում է և հաստատում գավառակային (շրջանային) կոմիտեյի հաշվետվությունը. գ) ընտրում է գավառակային (շրջանային) կոմիտե. դ) պատգամավորներ է ընտրում գավառային և այլ կոնֆերանսների համար. ե) քննարկում է հաստատում է գավառակային (շրջանային) գործկոմի ֆրակցիայի հաշվետվությունը:

54. Գավառակային (շրջանային) կոմիտեն ընտրվում է գավառակային (շրջանային) կուսժողովում և կոնֆերանսում 6 ամսով:

Գավառակային կոմիտեյի քարտուղարների համար պարտադիր է մեկ տարվա կուսակցական ստաժ ունենալը:

**Ծանոթություն.** — Յերեքից պակաս



գյուղական բջիջ ունեցող գավառակներում գավառակային կոմիտե չի կազմակերպվում. գավառային կոմիտեները կարող են այդ գավառակների գավառակային կենտրոնների բջիջներին հանձնել գավառակային կազմակերպության այս կամ այն պարտականությունների կատարումը:

55. Գավառակային (շրջանային) կոմիտեն գումարվում է առնվազն 2 շաբաթը մեկ անգամ:

56. Գավառակային (շրջանային) կոմիտեն ուղղություն է տալիս և ղեկավարում է գավառակում (շրջանում) գտնվող բոլոր կազմակերպությունների աշխատանքները, կատարում է կուսակցության բոլոր անդամների ցուցակագրումը, կազմակերպում է գրականության բաշխում, միտինգներ, դասախոսություններ և այլն, կազմակերպում է նոր բջիջներ և նրանց ներկայացնում գավառային (շրջանային) կոմիտեյին ի հաստատություն, վարում է գավառակային (շրջանային) կուսակցական գանձարկղը, ամիսը մեկ անգամ գավառային կոմիտեյին իր գործունեյության մասին հաշվետվություն է ներկայացնում,

կուսակցական ֆրակցիայի միջոցով ուղղություն է տալիս գավառական (շրջանային) գործկոմի աշխատանքներին:

## X. ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԲՋԻՋՆԵՐԻ ՄԱՍԻՆ

57. Կուսակցական կազմակերպության հիմքը հանդիսանում է կուսակցական բջիջը, որը հաստատվում է շրջանային, գավառային կամ ռայոնական կոմիտեյի կողմից առնվազն յերեք կուսանդամների կազմով:

58. Մեծ թվով բանվորներ ունեցող խոշոր ձեռնարկություններում ամբողջ ձեռնարկությունն ընդգրկող համագործարանային բջիջներում կարող են կազմակերպվել բջիջներ ցեխերի (ցեխային բջիջներ) յուրաքանչյուր առանձին դեպքում շրջկոմի (գավկոմի) կամ ռայկոմի (քաղաքներում) հաստատումով:

59. Բջիջն այն կազմակերպությունն է, որը բանվորա-գյուղացիական մասսաները կապում է տվյալ վայրի կուսակցության ղեկավար մարմնի հետ: Բջջի անելիքն է—1) մասսաների մեջ կուսակցական լոզունգներ և փո-



րոշումներ տարածել. 2) նոր անդամներ ներգրավել և նրանց դաստիարակել. 3) աջակցել տեղական կոմիտեյին նրա կազմակերպական և ագիտացիոն աշխատանքներում. 4) յերկրի տնտեսական և քաղաքական կյանքում ակտիվ մասնակցել իբրև կուսակցական մարմին:

60. Ընթացիկ աշխատանքը վարելու համար բջիջն ընտրում է բյուրո 6 ամսով:

Բջջի քարտուղարի համար պարտադիր է առնվազն մեկ տարվա կուսակցական ստաժ. բացառություն թույլ է տրվում միմիայն շրջկոմի (գավկոմի) կամ ռայկոմի (քաղաքներում) սանկցիայով:

## XI. ՎԵՐԱՀՍԿԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՄԱՍԻՆ

61. ՀամԿ(բ)Կ միասնականության և հեղինակության ամրացման գործում կուսակցությանն աջակցելու, բանվոր դասակարգի լավագույն մասը կուսակցության շարքերը ներգրավելու, ՀամԿ(բ)Կ ծրագիրն ու կանոնադրությունը կուսակցության անդամների կողմից խախտելու դեմ պայքարելու, խորհըր-

ղային մարմինների գործունեության մեջ կուսակցական գիծն ամեն տեսակետից ապահովելու և խորհրդային ու տնտեսական ապարատի բարելավման և պարզեցման համար միջոցներ մշակելու նպատակներով կազմակերպվում են համագումարում, մարզային, յերկրային, նահանգական և շրջանային կոնֆերանսներում ընտրություններ վերահսկիչ հանձնաժողովներ, վորոնք հաշիվ են տալիս իրենց ընտրող համապատասխան մարմինների առաջ:

Ծանոթություն. — Շրջանային (окружные) ՎՀ-ները կազմվում են ՀԱՄ. Կ(բ)Կ ԿԿ և ԿՎՀ թույլտվությամբ:

62. Վերահսկիչ հանձնաժողովների վորոշումները չեն կարող վերացվել համապատասխան կուսկոմների կողմից, բայց ուժի մեջ են մտնում միայն վերջիններիս համաձայնությամբ և հենց վերջիններս են կենսագործում այդ վորոշումները:

Անհամաձայնության դեպքում հարցը փոխադրվում է միացյալ նիստը: Յեթե կոմիտեյի հետ համաձայնություն չի կայանում, ապա հարցը փոխադրվում է համապատասխան



կուսակցական կոնֆերանս կամ բարձրագույն վերահսկիչ հանձնաժողով կամ կուսակցության համագումար՝ լուծելու համար:

## Ա. Կենտրոնական վերահսկիչ հանձնաժողովի մասին

63. ԿՎՀ ընտրվում է առավելապես այն բանվորներից և գյուղացիներից, վորոնք անհրաժեշտ չափի կուսակցական, խորհրդային, տնտեսական կամ անմիջական արտադրական պրակտիկա ունեն: ԿՎՀ այն անդամները, վորոնք նշանակված են անմիջորեն ԿՎՀ կամ ԲԳՏ մեջ աշխատելու համար, պետք է ունենան առնվազն 10 տարվա կուսակցական ստաժ, տեղական մարմիններում աշխատող ԿՎՀ անդամները՝ 7 տարուց վո՛չ պակաս ստաժ, և դազգյահի բանվորներն ու գյուղացիները՝ 5 տարվա ստաժ:

64. ԿՎՀ անդամները չեն կարող միաժամանակ կենտկոմի անդամներ լինել և չեն կարող վարչական և տնտեսական պոստեր գրավել:

Ծանոթություն. Բացառություններ թույլատրվում են ամեն անգամ Համ. Կ(բ)Կ ԿԿ և ԿՎՀ նախագահության հատուկ թույլտվությամբ:

65. ԿՎՀ պլենումը հրավիրվում է յերեք ամիսը մեկ անգամ։ Պլենումից պլենում ԿՎՀ մարմինների բոլոր ընթացիկ աշխատանքը ղեկավարելու համար կազմվում է 21 անդամից և 9 թեկնածուից բաղկացած նախագահություն և նրա գործադիր մարմինը—քարտուղարություն, ինչպես և կուսակցական էթիկայի, ՀամԿ(բ)Կ կանոնադրության և ծրագրի խախտման գործերը քննելու համար կազմվում է ԿՎՀ կուսկոլեգիա*)։

66. Համամիութենական, ազգային կոմկուսների, յերկրային, մարզային, նահանգական, շրջանային, գավառային և այլ կուսակցական համագումարներին ու կոնֆերանսներին, այլև պլենումներին, խորհրդակցություններին, նիստերին ու ժողովներին ԿՎՀ անդամները մասնակցում են խորհրդակցական ձայնի իրավունքով։ ՀամԿ(բ)Կ ԿԿ պլենումներին ներկա յեն լինում միայն ԿՎՀ նախագահության անդամներն ու թեկնածուները։ Այն դեպքում, յերբ հրավիրվում են ԿԿ

*) Տես «ՀամԿ(բ)Կ XV համագումարի վորոշումը կազմակերպական առանձին հարցերի վերաբերմամբ», եջ 54։



և ԿՎՀ միացյալ պլենումներ, ԿՎՀ անդամները մասնակցում են վճռական ձայնի իրավունքով։

ԿՎՀ նախագահությունը 3 անդամ և 3 թեկնածու է ուղարկում մասնակցելու ԿԿ Քաղբյուրոյի աշխատանքներին և 5 անդամ ու 5 թեկնածու՝ մասնակցելու ԿԿ կազմբյուրոյի և քարտուղարության նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով*)։

67 ԿՎՀ իրավունք ունի իր իրավասության սահմաններում հանձնարարություններ տալու կուսակցության բոլոր անդամներին և կուսկազմակերպություններին։

### Թ. Ազգ. կոմկուսների, մարզային (յերկրային), նահանգական և շրջանային (окружные) վերահսկիչ հանձնաժողովների մասին

68. Ազգ. կոմկուսների ԿՎՀ, մարզային (յերկրային), նահանգական և շրջանային ՎՀ

*) Տես «ՀամԿ(բ)Կ XV համագումարի վորոշումը կազմակերպական առանձին հարցերի վերաբերմամբ», եջ 55։

անդամների և թեկնածուների քանակը որոշվում է ՀամԿ(բ)Կ ԿՎՀ՝ նկատի ունենալով կազմակերպության հզորության չափը, շրջանի էկոնոմիկան և այլ առանձնահատկությունները։

ՎՀ անդամներն ու թեկնածուներն ընտրըվում են առավելապես կուսակցական տեսակետից ամենատոկուն բանվորներից ու գյուղացիներից, ընդվորում ազգ. կոմկուսների ԿՎՀ, մարզային (երկրային) ՎՀ համար առնվազն 7 տարվա, իսկ մնացած ՎՀ-ների համար—առնվազն 5 տարվա ստաժով, որոնք ունեն կուսակցական, խորհրդային և արհեստակցական աշխատանքի համապատասխան պրակտիկա և ընդունակ են իրագործելու իսկական կուսակցական և խորհրդային վերահսկողությունը։

Ծանոթություն. — Բացառություններ թույլատրվում են ՀամԿ(բ)Կ ԿՎՀ նախագահության և ՀամԿ(բ)Կ ԿԿ համաձայնությամբ։

69. ՎՀ անդամները չեն կարող միաժամանակ լինել նաև կուսկոմների անդամներ և



վարչական պատասխանատու պոստեր գրավել։

Ծանոթություն. — Բացառություն թույլատրվում է ՀամԿ(բ)Կ ԿՎՀ թույլտվությամբ։

70. ՎՀ պլենումն ընտրում է նախագահություն և կուսկոլեգիա և նշում է ԲԳՏ կոլեգիայի կազմը։

71. ՎՀ անդամներն ու թեկնածուները մասնակցում են կուսկոմիտեյի համապատասխան պլենումի նիստերին, կուսկոնֆերանսներին ու խորհրդակցություններին իրենց կազմակերպության սահմաններում խորհրդակցական ձայնի իրավունքով։

ՎՀ նախագահությունն իր անդամների մի մասին ուղարկում է մասնակցելու համապատասխան կուսկոմների բյուրոների նիստերին՝ խորհրդակցական ձայնի իրավունքով։

72. ՎՀ և կուսկոմի որոշումների տարամիտման դեպքում միացյալ նիստեր են գումարվում։Համաձայնության չգալու դեպքում ազգ. կոմկուսների ԿՎՀ-ից, մարզային (երկրային) ՎՀ-ից և նահ. ՎՀ-ից, որոնք չեն մտնում ազգ. կոմկուսների ԿՎՀ կամ մար-

գային (յերկրային) ՎՀ մեջ, հարցը փոխադրվում ե ՀամԿ(բ)Կ ԿՎՀ, իսկ ազգ. կոմկուսների ԿՎՀ կամ յերկրային ՎՀ մեջ մըտնող ՆՎՀ-ից և մարզային ՎՀ-ից հարցը փոխադրվում ե համապատասխան ազգ. կոմկուսի ԿՎՀ կամ յերկրային ՎՀ։

73. ՎՀ իր իրավասության սահմաններում իրավունք ունի հանձնարարություններ տալու կուսակցության բոլոր անդամներին և կուսկազմակերպություններին։

### Գ. ՎՀ լիազորների մասին

74. ՎՀ մարմինների և ստորին կուսկազմակերպությունների ու բանվորա-գյուղացիական լայն մասսաների միջև անմիջական և կենդանի կապն իրականացնելու նպատակներով շրջանային (окружные) և գավառային կուսկազմակերպություններում կազմվում ե ՎՀ լիազորների ինստիտուտ։

75. ՎՀ լիազորներ առաջադրում են շրջանային կամ գավառային կուսկոնֆերանսները առավելապես այն բանվորներից և գյուղացիներից, վորոնք ավելի կոփված են կուսակցական տեսակետից, ունեն 5 տարուց վոչ



պակաս ստաժ, և հաստատվում են համապատասխան ՎՀ-ից։

Ծանոթություն. Ցանկալի յե լիազորներ առաջադրել ՎՀ անդամներից։

76. Քաղաքական և տնտեսական տեսակետից ավելի խոշոր և նշանակելի շրջաններում ՎՀ լիազորներն ազատվում են բոլոր այլ աշխատանքներից, բացի կուսակցական աշխատանքից. մյուս բոլոր շրջաններում նրանք աշխատում են համատեղությամբ։

77. ՎՀ լիազորներն իրավունք ունեն մասնակցելու համապատասխան կուսկոմի նիստերին, կուսկոնֆերանսներին, ՎՀ խորհրդակցություններին ու նիստերին՝ խորհրդակցական ձայնի իրավունքով։

## XII. ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ԿՈՒՍԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

78. Կարմիր բանակում և Կարմիր նավատորմում կուսակցական աշխատանքի ընդհանուր ղեկավարությունն իրականացնում ե ԲԳԿԲ Քաղաքական վարչությունը՝ վորպես Կենտկոմի ռազմական բաժին։ Հանրապետու-

թյան քաղաքական վարչությունը (ПУР) իր ղեկավարությունը կիրառում է իր նշանակած քաղբաժինների (ռազմաճակատների, շրջանների (окружные), նավատորմերի, զորաբանակների, դիվիզիաների), զինկոմների և համապատասխան բանակային կոնֆերանսներում ընտրվող կուսակցական հանձնաժողովների միջոցով:

Կարմիր բանակում և նավատորմում բջիջները և կուսկոլեկտիվներն աշխատում են Կենտկոմի հաստատած հատուկ հրահանգի հիման վրա:

79. Զինվորական շրջանների, նավատորմի և բանակի քաղբաժինների պետերի համար պարտադիր է 7 տարվա կուսակցական ստաժ, դիվիզիաների և բրիգադների քաղբաժինների պետերի համար՝ 4 տարվա կուսակցական ստաժ:

80. Կուսակցական հանձնաժողովները վարում են կուսակցության անդամների և թեկնածուների ընդունման և վտարման հարցերը, այլև հետևում են, որ կուսակցության ծրագիրն ու կանոնադրությունը չխախտվեն:



Հանձնաժողովի անդամների համար պարտադիր է 5 տարվա կուսակցական ստաժ:

81. Կարմիր բանակի և նավատորմի կուսակցության անդամների և թեկնածուների նշանակման և տեղափոխության իրավունքը պատկանում է համապատասխան քաղմարմիններին:

Բանակի կուսակցական ղեկավար աշխատողների (հրամանատարական և քաղաքական կազմ) տեղափոխումները, կուսմարմինների հետ համաձայնեցնելու կարգը սահմանվում է Կենտկոմի հրահանգներով:

82. Քաղմարմինները պարտավոր են սերտ կապ պահպանել տեղական կուսակցական կոմիտեների հետ՝ վերջիններիս աշխատանքներին քաղմարմինների ղեկավարների և զինկոմների մշտական մասնակցության միջոցով, ինչպես և կուսկոմներում զորամասերի քաղափառանքի մասին քաղմարմինների պետերի և զինկոմների զեկուցումները պարբերաբար լսելով: Թեկնածուներ ընդունելու, թեկնածությունից կուսակցության անդամ փոխադրելու, կուսկանոնադրության խախտումների դեմ պայքարելու գործում կուսհանձնաժո-

ղովների աշխատանքի ղեկավարությունը տեղական կուսկոմներն ու վերահսկիչ հանձնաժողովները կենսագործում են՝ դիվիզիայի և շրջանային (окр.) կուսհանձնաժողովներում կուսաշխատանքի դրվածքի մասին պարբերաբար զեկուցումներ լսելով և այդ հանձնաժողովներին համապատասխան դիրեկտիվներ տալով:

## XIII. ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԴԻՍՑԻՊԼԻՆԱՅԻ ՄԱՍԻՆ

83. Կուսակցական խստագույն դիսցիպլինան կուսակցության բոլոր անդամների և կուսակցական բոլոր կազմակերպությունների առաջնագույն պարտականությունն է: Կուսակցական կենտրոնների որոշումը պետք է կատարվի արագ և ճշտորեն: Միաժամանակ կուսակցության ներսում կուսակցական կյանքին վերաբերող բոլոր վիճելի հարցերի քննարկումը միանգամայն ազատ է մինչև այդ հարցերի մասին որոշում ընդունելը:

84. Բարձրագույն կազմակերպությունների որոշումները չկատարելու և կուսակցության



հասարակական կարծիքով հանցավոր ճանաչված այլ զանցառումների համար կազմակերպությունները տանում են հանդիմանություն, վերից նշանակվում է ժամանակավոր կոմիտե և ընդհանուր վերագրանցակարգում է կատարվում (կազմակերպության զտում)․ կուսակցության առանձին անդամները յենթարկվում են այս կամ այն տեսակի կշտամբանքի (ի տես դնել, նկատողություն և այլն), հրապարակային հանդիմանության, ժամանակավոր հեռացման՝ կուսակցական և խորհրդային պատասխանատու աշխատանքից, կուսակցությունից վտարման՝ զանցառումների մասին հաղորդելով վարչական և դատական իշխանություններին: Կուսանդամին թեկնածության փոխադրելը, որպես կուսակցական պատժի միջոց, չի թույլատրվում:

85. Կարգապահական զանցառումները քննում են ընդհանուր ժողովները և վերահսկիչ հանձնաժողովները սովորական կարգով սահմանված ինստանցիաներով:

## XIV. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

86. Կազմակերպության դրամական միջոցները գոյանում են անդամավճարներից, կուսակցական բարձրագույն կազմակերպությունների սուբսիդիաներից և այլ մուտքերից:

87. Կուսակցության անդամների և թեկնածուների համար անդամավճարները սահմանվում են նրանց աշխատավարձի ½%-ից ոչ պակաս: Սահմանվում է անդամավճարի չափի չորս կատեգորիա համաձայն ռոճիկի մեծության. 1-ին կատեգորիան վճարում է ½%, 2-րդը՝ 1%, 3-րդը՝ 2%, 4-րդը՝ 3%:

88. Անորոշ դասում ունեցող անձերի, օրինակ՝ գյուղացիների անդամավճարները սահմանում են տեղական նահանգային կոմիտեները:

89. Անդամավճար տալուց միանգամայն ազատվում են գործազուրկները և սոցիալական ապահովությամբ ապրողները (հաշմանդամներն ու դառամյալները):

90. Մուտքի վճարները գանձվում են թեկնածու ընդունելիս՝ ստացած աշխատավարձի



3%-ի չափով, և այդ վճարումից ոչ. ոք չի ազատվում:

91. Երեք ամիս առանց հարգելի պատճառի անդամավճար չվճարող կուսանդամներն ու թեկնածուները համարվում են կուսակցությունից դուրս յեկած, որի մասին տեղեկացվում է ընդհանուր ժողովին ի գիտություն:

92. Անդամավճարների և կուսակցական հատկացումների գանձման կարգը սահմանվում է հատուկ հրահանգով:

## XV. ԱՐՏԱԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖՐԱԿՑԻԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ

93. Բոլոր համագումարներում, խորհրդակցություններում և ընտրովի մարմիններում (խորհրդային, արհեստակցական, կոոպերատիվ և այլն), ուր կա առնվազն 3 կուսանդամ, կազմակերպվում են ֆրակցիաներ, որոնց խնդիրն է՝ ամենակողմանի ուժեղացնել կուսակցության ազդեցությունը, կենսագործել նրա քաղաքականությունն արտակուսակցական միջավայրում և կուսակցական վերա-

հսկողությունը նշած բոլոր հիմնարկների և կազմակերպությունների աշխատանքի վերաբերմամբ։

Ընթացիկ աշխատանքի համար ֆրակցիաները կարող են ընտրել բյուրո։

94. Կուսակցական կոմիտեյում որևէ կազմակերպության ֆրակցիային վերաբերող հարցեր քննելիս՝ այդ կազմակերպության ֆրակցիան իր ներկայացուցիչներն է ուղարկում համապատասխան կոմիտեյի նիստին՝ խորհրդակցական ձայնով։

95. Ֆրակցիաներն՝ անկախ իրենց նշանակությունից՝ ամբողջովին ենթարկվում են համապատասխան կուսկազմակերպություններին։ Բոլոր այն հարցերում, որոնց մասին կան համապատասխան կուսակցական կազմակերպության օրինական որոշումներ, ֆրակցիաները պարտավոր են խիստ և անշեղորեն ղեկավարվել այդ որոշումներով։ Կոմիտեն իրավունք ունի ֆրակցիայի կազմի մեջ մտցնել, կամ նրանից դուրս հանել ամեն մի անդամի՝ անպայման հայտնելով ֆրակցիային նման միջոցի պատճառների մասին, բայց փո-րում անդամ հետ կանչելը և նոր անդամ



մտցնելը պետք է կատարվի համաձայն այն արտակուսակցական մարմնի կանոնադրության ու կանոնների, որին կից աշխատում է ֆրակցիան։ Իր ներքին կյանքի և ընթացիկ աշխատանքի հարցերում ֆրակցիան ինքնավար է։

Կուսակցական կոմիտեի և ֆրակցիայի միջև վերջինիս իրավասության վերաբերող որևէ հարցում եյական տարաձայնություն ծագելու դեպքում կոմիտեն պարտավոր է կրկին անգամ քննել այդ հարցը ֆրակցիայի ներկայացուցիչների հետ միասին և ընդունել վերջնական որոշում, որը ֆրակցիան պետք է անհապաղ կատարի։

9 . Այն կազմակերպություններում, ուր աշխատում է ֆրակցիան, բոլոր կարևորագույն պաշտոնների համար թեկնածուներ նշում է ֆրակցիան՝ համապատասխան կուսակցական կազմակերպության հետ միասին։ Նույն կարգով էլ տեղի յե ունենում մի պաշտոնից մյուսը փոխադրելը։

97. Քաղաքական նշանակություն ունեցող և ֆրակցիայի քննությանը ենթակա բոլոր

հարցերը պետք է քննարկվեն կոմիտեի ներկայացուցչի մասնակցությամբ։

98. Սկզբունքային նշանակություն ունեցող հարցերը, վորոնք յենթակա յեն լուծման այն արտակուսակցական կազմակերպության մեջ, ուր աշխատում է ֆրակցիան, այլև այն բոլոր հարցերը, վորոնց նկատմամբ անհրաժեշտ է կոմունիստների համաձայնեցված յելույթ, պետք է նախորոք քննարկվեն ընդհանուր ժողովում կամ ֆրակցիայի բյուրոյում։

99. Վորևէ արտակուսակցական կազմակերպության ֆրակցիայում լուծված յուրաքանչյուր հարցի առթիվ ֆրակցիայի բոլոր անդամները տվյալ կազմակերպության ընդհանուր ժողովում պարտավոր են միաձայն քվեարկել։ Այս կանոնը խախտողները յենթարկվում են սովորական կարգով կարգապահական պատժի համաձայն կանոնադրության։

100. Արտակուսակցական մարմիններին կից գործող ֆրակցիաներն անմիջորեն հարաբերության մեջ չեն մտնում ստորադաս մարմինների ֆրակցիաների հետ։ Այս կամ այն ֆրակցիան իր վորոշումները կուսակցական գծով անցկացնելու անհրաժեշտության դեպ-



քում այդ իրագործում է համապատասխան կուսակցական կոմիտեի միջոցով (կոմիտեի քարտուղարի և ֆրակցիայի բյուրոյի անդամի ստորագրությամբ)։

им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

## ՀԱՄԿ(բ)Կ XV ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԱՌԱՆՁԻՆ ՀԱՐՑԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՄԱՄԲ

1. Ի փոփոխումն կանոնադրության՝ համամիութենական կուսակցական համագումարները հրավիրել ոչ ուշ, քան յերկու տարին մի անգամ։

2. ԿՎՀ պլենումները հրավիրվում են 3 ամիսը մի անգամ համագումարից համագումար ընկած ժամանակամիջոցում։ ԿՎՀ մարմինների ընթացիկ ամբողջ աշխատանքի ղեկավարության համար կազմվում է 21 անդամից և 9 թեկնածուից բաղկացած Նախագահություն, — այլև կուսակցական եթիկայի, ՀամԿ(բ)Կ կանոնադրության և ծրագրի խախտման գործերը քննելու համար կազմվում է ԿՎՀ կուսկոլեգիա։



3. ԿՎՀ նախագահությունն ուղարկում է քաղբյուրո չորս անդամ և չորս թեկնածու։

4. Վերահսկիչ հանձնաժողովների հարցերին ուղիղ պատասխանելուց հրաժարվող կուսանդամները յենթակա յեն կուսակցությունից անհապաղ վտարման։

5. Համամիութենական դիսկուսիան կարող է անհրաժեշտ համարվել միայն այն դեպքում, յեթե ա) այդ անհրաժեշտությունն ընդունում են նահանգական կամ մարզային մասշտաբի գոնե մի քանի տեղական կուսկազմակերպություններ, բ) Կենտկոմի ներսում կուսակցական քաղաքականության կարևորագույն հարցերի նկատմամբ բավականաչափ հաստատուն մեծամասնություն չկա, գ) յեթե, չնայած վոր Կենտկոմում հաստատուն մեծամասնություն կա՝ վորոշ տեսակետի վրա կանգնած, բայց և այնպես Կենտկոմն անհրաժեշտ է համարում ստուգել իր քաղաքականության ճշտությունը՝ կուսակցության մեջ դիսկուսիոն քննության միջոցով։ Ընդսմին այս բոլոր դեպքերում համամիութենական դիսկուսիան կարող է սկսվել և կերպավել միայն Կենտկոմի համապատասխան վորոշումից հետո։

գին 20 կ.

ՀՀ Ազգային գրադարան
NL0180899